ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԱՆՁՍՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ։

Տարւոյս փետրուար ամսի 18-ին կայացաւ յիշեալ Գանձարանի տարեկան ընդհանուր ժողովի նիստը նախագահութեամբ Գիւտ ա. քահ. Աղանեանի։

Վարչութեան Գանձապահ արժ. տ. Գրիգորիս Երզնկեանը կարդաց նախընթաց 3 տարւոյ և 8 ամսւոյ հաշիւը, որից երևաց, որ այդքան ժամանակում մուտք եղել է 34,515 ռուբլի 63 կոպէկ (15,136 ռ. 75 կ. մայր դրամարը հետը հաշուած) և ծախք 10,702 ռ. 28 կ. ծախքը մուտքից հանելով մնում է պատրաստի դրամ 23,813 ռ. 28 կոպէկ։ Որովհետև հաշիւների մասին կային բաղմաթիւ թիւրիմացութիւններ, ուստի ընդհանուր ժողովը հաշիւը չհաստատեց, այլ յանձնեց առանձին մասնաժողովի քննութեան և ստուգութեան։

Ապա կատարուեցան պաշտօնական անձանց ընտրութիւնները. ընտրուեցան՝

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Գիւտ ա. ք. Աղանեանց	16	ձայնով	ընդդէմ	4-ի
Յովհաննէս ք. Տէր Գրիգորեանց	13	»	»	7
Արշակ ք. Մինասեանց	13	»	»	7
Գրիգորիս ք. Մատինեանց	11	»	»	9
Գաբրիէլ ա. ք. տ. Գաբրիէլեանց	11	»	»	9
և ԳԱՆՁԱՊԱՀ				
Յովհաննէս ք. Իւղբաշեանց	12	»	»	8

Ընտրութեանց արդիւնքը, վաւերացրած բոլոր ժողովականների ստորագրութիւններով, ներկայացուած են Նորին Բարձր Սրբազնութեան տնօրինութեան։

Այս ժողովներից առաջինի մասին Թիֆլիզի լրագիրներից մէկում ոմն «ընտրող» (??) ստորագրութեամբ այլընդայլոյ տեղեկութիւններ էր հաղորդել և դրանով աշխատել ստուեր գցել ընդհանուր ժողովի վերայ. հարկաւոր ենք համարում յայտնել, որ, ինչպէս կարելի է ստուգել ժողովի պաշտօնական և բոլոր քսան ժողովականների ստորագրութիւններով վաւերացուած արձանագրութիւնից, ժողովի յիշեալ նկարագիրը իսպառ հեռի է ճշմարտութիւնից և յերիւրուած է անճիշտ և շինծու տեղեկութիւններով։ Նախկին վարչութեան անդամներից ոմանք փոխանակ լրագիրների ընթերցողներին մոլորեցնելու իրանց կրքոտ գրպարտութիւններով, աւելի լաւ կանէին, եթէ իրանց հաշիւներն այնպէս կազմէին, որ արժանանային ընդհանուր ժողովի վաւերացման։